ECCE HOMO[1]

«*Այս մարդու մասին ի՞նչ ամբաստանություն եք ներկայացնում*[2]»: Այս խոսքերով հռոմեացի կուսակալ Պոնտացի Պիղատոսը դիմավորեց հրեա քահանայապետերին և օրենսգետներին, երբ Հիսուսին բերեցին նրա մոտ, որպեսզի դատապարտի նրան մահվան[3]:

Մեղադրել Հիսուսին աստվածանարգության մեջ, որի համար հրեա ծերակույտը՝ քահանայապետերն ու օրենսգետները նրան դատապարտել էին մահվան[4], իմաստ չէր ունենա, քանի որ այդ փաստարկը Պիղատոսի առջև հիմավոր չէր լինի, ուստի պետք է գտնեին այլ փաստարկ: Եվ նրանք գտան այն՝ Հիսուսն իրեն հայտարարում է թագավոր, ուստի նա առաջնորդն է հակակառավարական ապստամբության: Այս փաստարկն էր, որը պետք է ներկայացվեր Պիղատոսի առջև, քանի որ հենց Պիղատոսի հիմական գործառույթն էր ապահովելու հռոմեական իշխանության կայունությունը ապստամբ հուդայական թագավորությունում:

Քանի որ հրեաների համար պղծություն էր ներկա գտնվել Պիղատոսի ապարանքում[5], ուստի Պիղատոսը դատավարությունը անցկացնում էր մի մասը ապարանքում՝ հարցաքննելով Հիսուսին, իսկ մյուս մասը ապարանքից դուրս, պատշգամբում՝ լսելով հրեաների մեղադրանքները:

Եվ ահա Պիղատոսը դուրս գալով հրեաների առաջ ասում է. «*Այս մարդուն բերեցիք ներկայացրեցիք ինձ, որպես ժողովրդի մոլորեցնողի. և ահավասիկ ձեր առջև դատաքննություն արեցի և այս մարդու մեջ չգտա մեկն այն հանցանքներից, որոնցով դուք ամբաստանում եք նրան*[6]»:

Հանդիպելով հրեաների դիմադրությանը նա դարձյալ մտավ ապարանք և հարցաքննեց Հիսուսին և չգտնելով Հիսուսի դեմ որևէ փաստարկ նա կրկին անգամ դիմելով հրեաներին ասաց. «*Ի՞նչ չար բան է արել սա. նրա վրա մահվան արժանի որևէ հանցանք չգտա. սրան գանահարել կտամ և կարձակեմ*[7]»: «Այն ժամանակ Պիղատոսը հրամայեց Հիսուսին վերցնել և նրան գանակոծել: Պիղատոսը դարձյալ դուրս ելավ ու ասաց նրանց. «*Ահա նրան դուրս, ձեզ մոտ եմ բերում, որպեսզի իմանաք, թե ես նրա մեջ որևէ հանցանք չեմ գտնում*»: Հիսուսը դուրս ելավ. և փշե պսակ ուներ և ծիրանի զգեստ: Եվ նրանց ասաց. «***Ահա ձեր մարդը՝ ձեզ***»: Երբ քահանայապետերն ու պահակները նրան տեսան, աղաղակ բարձրացրին և ասացին. «*Խա՛չը հանիր, խա՛չը հանիր դրան*»: Պիղատոսն նրանց ասաց. «*Դո՛ւք առեք նրան ձեր մեջ և ինքնե՛րդ խաչը հանեցեք, քանի որ ես դրա մեջ որևէ հանցանք չեմ գտնում*»... Սրանից հետո Պիղատոսը ուզում էր նրան

---

[1] Այս մարդը. ահա մարդը (որ պահանջում էիք) (***Պիղատոս***): Վ. Համբարձումյան, Լատիներենի դասագիրք, Եր.: Զանգակ-97, 2007, էջ223:

[2] Նոր Կտակարան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1992, Հովհաննէս 18:29

[3] Հռոմեական տիրապետության ժամանակ հրեա ժողովրդին թեև թույլ էր տրվել ունենալ իրենց դատարանները, սակայն մահվան դատավճիռները չէին կարող իրականացվել նրանց կողմից:

[4] Տես Նոր Կտակարան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1992, Ղուկաս 22:66-70:

[5] Տես նույն տեղը, Հովհաննես 18:28:

[6] Տես նույն տեղը, Ղուկաս 23:14:

[7] Տես նույն տեղը, Ղուկաս 23:22:

ազատ արձակել: Իսկ հրեաները աղաղակում էին ու ասում. «***Եթե դրան արձակես, կայսերին բարեկամ չես: Ամենայն ոք, որ ինքն իրեն թագավոր է կոչում, հակառակ է կայսեր***»: Իսկ երբ Պիղատոսը այս խոսքերը լսեց, Հիսուսին դուրս բերեց, նստեց բեմի վրա, այն տեղը, որ Քարահատակ էր կոչվում, իսկ եբրայեցերեն՝ Կապպաթա: ... Այն ժամանակ Հիսուսին հանձնեց նրանց ձեռքը, որպեսզի խաչը հանվի[8]»:

Հիսուսին մահվան դատապարտելու համար, Պիղատոսի համար մեկ փաստարկ նշանակություն ունեցավ այն էր՝ «***Եթե դրան արձակես, կայսերին բարեկամ չես: Ամենայն ոք, որ ինքն իրեն թագավոր է կոչում, հակառակ է կայսեր***»: Այս խոսքերից հետո էր, երբ Պիղատոսը համոզված լինելով Հիսուսի արդարության վրա, այլ կերպ ասած համոզված լինելով, որ մահվան էր դատապարտում արդարին, այդուհանդերձ կայացրեց անգամ իր չափանիշներով անարդար դատավճիռը, ձևականորեն օգտվելով հռոմեական սովորույթից՝ ամբոխի առջև լվանալով իր ձեռքերը և ասելով. *«Այդ արդարի արյունից ես անմասն եմ. դո՛ւք գիտեք[9]»*:

Այս պատմությունը լավագույնս նկարագրում է արդարադատության ոլորտում այն երևույթը, որը կոչվում է «*Ձեռքերը լվանալ*»: Պիղատոսի դեպքում կարևորը ոչ թե «*Արդարն*» էր, այլ իր դիրքը և երբ բախում առաջացավ իր դիրքի և արդարության միջև, նա ընտրեց իր դիրքը: Փաստերը թույլ են տալիս ենթադրելու, որ Պիղատոսը ամենայն հավանականությամբ չի ցանկացել, որ հրեաների առաջնորդները լուր տանեն կայսրին այն մասին, որ Հուդայում ոմն մեկը իրեն հռչակել է թագավոր և Պիղատոսը նրան ազատ է արձակել: Կարելի է պատկերացնել թե Հին Հռոմում ինչպիսի հետևանք կարող էր ունենալ այդ լուրը, ուստի ինչո՞ւ վտանգել սեփական դիրքը, եթե կարելի է հանգիստ շարունակել պաշտոնավարումը բավարարում տալով հրեա քահանայապետերին և կորստյան մատնելով արդարին:

Արդյո՞ք այս երևույթն առկա չէ աշխարհի շատ և շատ արդարադատություններում, արդյո՞ք դատավորները շատ հաճախ չեն առաջնորդվում «Ձեռքերը լվանալու» սկզբունքով...

Կարծում եմ այս հարցը ամեն օր իրեն պետք է տա դատավորը, ով դատում է անձին և ամեն դատավարության ավարտին պետք է իր սրտում խորհի՝ նա հերթական անգամ լվաց իր ձեռքերը հանուն իր դիրքի և պաշտոնի թե՞ իրականացրեց արդարադատություն և հռչակեց արդարությունը դեմ չգնալով իր ներքին համոզմունքին: Ընդ որում այս դիլեման հնարավոր չէ լուծել արդարադատական ոլորտում ներգրավված դատավորների փաստարկները լսելով, որոնք շատ հաճախ ուղղված են իրենց գործողություններն արդարացնելուն: Այստեղ գոյություն ունի մեկ փաստարկ արդյո՞ք դատապարտվեց հերթական արդարը թե՝ ոչ, մնացածը կարևոր չեն, կարևորը մեկ բան է՝ արդարը չպետք է դատապարտվի այն բանի համար, որ նրան դատապարտող դատավորը չի ցանկանում զրկվել իր բարեկեցությունից, իր պաշտոնից: Խոսքը գնում է այն մասին, երբ գործում չկան բավարար ապացույցներ անձին ոչ միայն դատապարտելու այլև նրա իրավունքը սահմանափակելու համար:

---

[8] Տես նույն տեղը, Հովհաննես 19:1-16:

[9] Տես նույն տեղը, Մատթէոս 27:24:

Արդարադատական ոլորտում խնդիրների զգալի մասը կապված են «Ձեռքերը լվանալու» սկզբունքի հետ, իհարկե սա փոխաբերություն է: Եթե ուղիղ փորձենք ձևակերպել այս սկզբունքը, ապա կստացվի հետևյալը: Շատ հաճախ դատավորը դատական ակտը կայացնում է հիմքում ունենալով ոչ թե գործի փաստերը, այդ փաստերը ապացուցող կամ ժխտող ապացույցները, կողմերի իրավական դիրքորոշումներն ու գործի համար էական նշանակություն ունեցող այլ *իրավական* հանգամանքները, այլ այդ գործից դուրս կամ գործում գտնվող ազդեցիկ այն անձանց շահերը, որոնք շոշափվում են այդ գործով, ինչպես նաև հենց իր սեփական շահերը: Բազմաթիվ անձանց իրավունքներ են խեղվել և ոչնչացվել, երբ դատավորը հանուն իր բարեկեցության «Ձեռքերը լվացել է»: Ընդ որում բարեկեցություն բառի տակ կարելի է նկատի ունենալ բազմազան սուբյեկտիվ շահեր, սկսած շողոքորթ վարքագծից վերջացրած կոնկրետ պրագմատիկ հաշվարկով:

«ECCE HOMO»-ի պատմությունը լավագույնս ցույց է տալիս թե ինչպիսին չպետք է լինի արդարադատությունը: Մեծ հաշվով այդ պատմությամբ աշխարհը ցույց տվեց, որ արդարադատության հարցում նա սխալ է...

Մաս «Տրակտատ ՀՀ արդարադատական համակարգի վերաբերյալ» ստեղծագործությունից: